

# Տակտիլային վերգետնյա ցուցիչներ

–

Համաձայն ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի ՀՀԿՀ 23-101-2017 «Բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի և շինությունների մատչելիության ապահովման նախագծման կանոնների հավաքածուին հավանություն տալու մասին» 2018 թվականի ապրիլի 5-ի N 43-Ա հրամանի

Տակտիլային սալիկը վերգետնյա տակտիլային ցուցանակ է, որը թույլ է տալիս կազմակերպել անարգել միջավայր տեսողության խնդիրներ ունեցող մարդկանց համար: Այն տեսողության խնդիր ունեցող անձանց տալիս է ինքնուրույն կողմնորոշվելու հնարավորություն տարածության մեջ, օգնում է նրանց համար շատ օբյեկտներ դարձնելու մատչելի:

Տակտիլային սալիկները լինում են երկու տեսակի.

- շարժման ուղղությունների մասին տեղեկացնող,
- ուղիներում արգելքների մասին նախազգուշացնող:

Տակտիլային հատակային ցուցանակները տեղադրում են հասարակական շենքերի և շինությունների միջանցքներում և սանդղավանդակների հարթակներում, մետրոպոլիտենի կայարաններում տեսողության խնդիրներ ունեցող անձանց շարժման ուղղորդման, ինչպես նաև շարժման ուղիով հնարավոր վտանգներից նրանց նախազգուշացման համար:

Սույն պաստառը հնարավոր է դարձել Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով և «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի կողմից իրականացվող «Պահանջատեր հասարակություն՝ հանուն պատասխանատու կառավարման» ծրագրի շրջանակներում: Պաստառի բովանդակության համար պատասխանատու է «Հաշմանդամություն և ներառական զարգացում» ՀԿ-ն, և այն պարտադիր չէ, որ արտահայտի ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

USAID FROM THE AMERICAN PEOPLE

ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ հակակոռուպցիոն կենտրոն

ՊԱՀԱՆՋԱՏԵՐ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ